

Անուն _____ Բարկություն և անձնական իրավունքներ

Ամսաթիվ _____ Ստուգարք, 5-րդ խմբագրում

Դասարան _____ դասարան

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր)

Ցուցումներ. Դի՛ր X, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր O, եթե պատասխանը սխալ է:

1. _____ Եթե դու քո անձնական իրավունքները տալիս ես Աստծուն, դրանք այլևս Նրան են պատկանում: Դրանք հիմա Աստծո անձնական իրավունքներն են:
2. _____ Եթե մի անձնավորություն իր անձնական իրավունքները տալիս է Աստծուն, պետք է որոշում կայացնի՝ Աստծուն շնորհակալություն հայտնելու՝ ինչ էլ որ պատահի դրանից հետո:
3. _____ Եթե մի անձնավորություն իր անձնական իրավունքները չի տալիս Աստծուն, և ինչ-որ մեկը ոտնահարում է (խախտում է) այդ իրավունքներից մեկը, ապա նա, որպես կանոն, բարկանում է:
4. _____ Երբ Հիսուսը բարկացավ, մեղք գործեց և ստիպված էր Աստծուց ներում խնդրել:
5. _____ Աստված չի ուզում, որ դու Իրեն տաս քո անձնական իրավունքները:
6. _____ Եթե մի անձնավորություն իր անձնական իրավունքները տալիս է Աստծուն, Աստված երբեք չի փորձի նրան՝ տեսնելու, թե արդյո՞ք նա անկեղծ է:
7. _____ Շատ քրիստոնյաներ, երբ բարկանում են մեկ այլ անձնավորության վրա, մտածում են իրենց սերն Աստծո հանդեպ ցույց տալ:
8. _____ Դժվար է մեղք գործել, երբ բարկացած ես:
9. _____ Քրիստոնյաների մեծ մասն այլևս մեղք չի գործում այն բանից հետո, երբ անձնական իրավունքները տալիս է Աստծուն:
10. _____ Աստված շատ կանոններ ունի Աստվածաշնչում, որոնք քեզ ասում են, թե ինչպես արձագանքես դեպքերին այն բանից հետո, երբ Նրան տաս քո անձնական իրավունքները:
11. _____ Անցյալի չլուծված վիրավորանքները կարող են սնել քո բարկությունը:
12. _____ Երբ ինչ-որ մեկը ոտնահարում է քո անձնական իրավունքներից որևէ մեկը, որ տվել ես Աստծուն, դու պետք է միշտ նրան ասես, որ նա սխալ է այդ հարցում:

Բազմակի ընտրությամբ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):

Ցուցումներ. Ընտրի՛ր լավագույն պատասխանը և պատասխանի տառը գրի՛ր հարցին նախորդող դատարկ գծիկի վրա:

1. _____ Երբ մարդն իր անձնական իրավունքները տալիս է Աստծուն, նա պետք է.
 - Ա. Միշտ բարկանա:
 - Բ. Բարկանա միայն Աստծո վրա:
 - Գ. Շնորհակալություն հայտնի Աստծուն՝ ինչ էլ որ դրանից հետո պատահի:

2. _____ Աստվածաշնչի մեծագույն օրենքն ասում է.
 - Ա. Սիրի՛ր դրացուդ:
 - Բ. Սիրի՛ր Աստծուն:
 - Գ. Սիրի՛ր ընկերներիդ:

3. _____ Երբ դու քո անձնական իրավունքները տալիս ես Աստծուն, պետք է.
 - Ա. Սովորես ներքին որակներ զարգացնել՝ այդ իրավունքներով փոխարինելու համար:
 - Բ. Սկզբում աղոթես և ամբողջ օրը ծոմ պահես, իսկ հետո ասես քո հովվին այդ մասին:
 - Գ. Խնդրես Աստծուն, որ վերադարձնի դրանք՝ որպես առավելություններ:

4. _____ Դու քո անձնական իրավունքները տալիս ես Աստծուն.
 - Ա. Քրիստոնյա դառնալով:
 - Բ. Աստծուն ասելով, որ ուզում ես, որ Նա դառնա քո անձնական իրավունքների սեփականատերը:
 - Գ. Աղոթելով և հանդիպելով մի քրիստոնյա իրավաբանի հետ:

5. _____ Քո անձնական պատասխանատվությունները.
 - Ա. Նույնն են՝ ինչ քո անձնական իրավունքները:
 - Բ. Դրանք գործողություններ են, որոնք դու իրավունք ունես անելու:
 - Գ. Դրանք գործողություններ են, որոնք մեզ տրված են, որ կատարենք:

6. _____ Երբ դու քո անձնական իրավունքները տալիս ես Աստծուն, Նա, հնարավոր է, դրանցից որոշ մասը վերադարձնի քեզ: Դրանք հիմա կոչվում են.
 - Ա. Անձնական իրավունքներ:
 - Բ. Անձնական պատասխանատվություններ:
 - Գ. Առավելություններ:

Կարճ շարադրանքով հարցեր:

1. Ի՞նչ է անձնական իրավունքը: Բացատրի՛ր, թե ինչ են նշանակում «անձնական իրավունք» բառերը (5 միավոր):

2. Ինչո՞ւ է կարևոր քո անձնական իրավունքներն Աստծուն տալը (5 միավոր):

3. Բացատրի՛ր, թե ինչպես կարող է մարդն իր անձնական իրավունքները տալ Աստծուն (8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

1. _____

2. _____

3. _____

4. _____

4. Ա. Քո անձնական իրավունքներից ո՞րն է ոտնահարվել վերջին մի քանի շաբաթվա ընթացքում (4 միավոր):

Բ. Ո՞ր ներքին դրական որակներն են քեզ ամենաշատն օգնում՝ Աստծո ուզած ձևով արձագանքելու համար, երբ տվյալ անձնական իրավունքը խախտվում է (չորս միավոր):
